ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

«15» հուլիսի 2014 թվականի **թիվ 112** քաղ. Մոսկվա

Ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին միջնորդների (գործակալների) վարձատրության եւ բրոքերների վարձատրության ավելացման վերաբերյալ հիմնադրույթը հաստատելու մասին

«Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 1–ին հոդվածի 3–րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան որոշեց.

1. հաստատել ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին միջնորդների (գործակալների) վարձատրության եւ բրոքերների վարձատրության ավելացման վերաբերյալ հիմնադրույթը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ

ЕВРАЗИЙСКАЯ ЭКОНОМИЧЕСКАЯ КОМИССИЯ ДЛЯ ДОКУМЕНТОВ

Վ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի
հուլիսի 15–ի թիվ 112 որոշմամբ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին միջնորդների (գործակալների) վարձատրության եւ բրոքերների վարձատրության ավելացման վերաբերյալ

1. Սույն հիմնադրույթը մշակվել է «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր), 1994 թվականի «Սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի կիրառման մասին» համաձայնագրի դրույթների՝ ներառյալ դրան կից բացատրական նշումները, ինչպես նաեւ Համաշխարհային մաքսային կազմակերպության մաքսային գնահատման տեխնիկական կոմիտեի կողմից մշակված նյութերի հիման վրա:

2. Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 1 «ա» ենթակետին համապատասխան՝ ներմուծվող ապրանքների գործարքների արժեքի հիման վրա այդ ապրանքների մաքսային արժեքը որոշելիս (1-ին մեթոդ)՝ դրանց համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին ավելացվում են միջնորդների (գործակալների) վարձատրությունը եւ բրոքերների վարձատրությունը՝ բացառությամբ գնման համար վարձատրությունից, որը գնորդի կողմից վճարվում է իր միջնորդին (գործակալին)՝ արտերկրում նրա ներկայացմամբ մատուցած՝ ներմուծվող ապրանքների գնման մասով ծառայությունների համար (այսուհետ՝ գնման համար վարձատրություն):

Միջնորդների (գործակալների) վարձատրությունը եւ բրոքերների վարձատրությունը ներառվում են ապրանքների մաքսային գնի մեջ այնքանով, որքանով դրանք վճարված են կամ ենթակա են վճարման գնորդի կողմից, սակայն ներառված չեն ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ:

Միջնորդների (գործակալների) վարձատրության եւ բրոքերների վարձատրության չափը սահմանվում է միջնորդության պայմանագրում, որպես կանոն՝ գնման ենթակա (վաճառքի ենթակա) ապրանքների արժեքի նկատմամբ՝ տոկոսներով:

3. Սույն Հիմնադրույթում միջնորդ (գործակալ) ասելով պետք է հասկանալ այն անձը, որի վարձատրության դիմաց՝ այլ անձի (հանձնարարողի, կոմիտենտի, պրինցիպալի եւ այլ անձանց) հանձնարարությամբ կատարում է ապրանքների գնման կամ վաճառքի հետ կապված իրավաբանական կամ այլ գործողություններ՝ այդ ուրիշ անձի կամ իր անունից, սակայն միշտ այդ ուրիշ անձի հաշվին:

Գնման միջնորդներ (գործակալներ) են համարվում այն միջնորդները, որոնք գործում են ի շահ գնորդի:

Վաճառքի միջնորդներ (գործակալներ) են համարվում այն միջնորդները, որոնք գործում են վաճառողի շահերից ելնելով:

Միջնորդների (գործակալների) եւ այն անձանց միջեւ փոխհարաբերությունները, որոնց շահերից ելնելով են գործում նրանք, կարգավորվում են այն պայմանագրերով, որոնք կարող են կնքվել ինչպես Մաքսային միության անդամ պետության քաղաքացիական օրենսդրությանը, այնպես էլ երրորդ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, օրենսդրության մեջ կարող են օգտագործվել տարբեր եզրույթներ, ինչպես միջնորդության պայմանագրերը (օրինակ՝ գործակալության պայմանագիր, կոմիսիայի պայմանագիր, հանձնարարության պայմանագիր եւ այլն), այնպես էլ

միջնորդների (գործակալների) եւ այն անձանց նշելու համար, որի շահերից ելնելով են նրանք գործում:

4. Ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին միջնորդների (գործակալների) վարձատրությունն ավելացնելու հարցը լուծելու համար անհրաժեշտ է հիմք ընդունել պայմանագրի կողմերի այն հարաբերությունների էությունը, որոնք կապված են ապրանքների գնման եւ վաճառքի ժամանակ միջնորդության ծառայությունների մատուցման հետ ու քննարկել ներմուծվող ապրանքների գնման եւ վաճառքի ժամանակ միջնորդի (գործակալի) գործունեությունը բնութագրող բոլոր գործոններն ամբողջությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե նշված անձին ինչ անվանում է տրվում միջնորդության պայմանագրում կամ արտաքին տնտեսական պայմանագրում:

5. Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 1 «ա» ենթակետին համապատասխան՝ գնորդի կողմից իր գնման գծով միջնորդին (գործակալին) գնման համար վճարվող վարձատրությունը մատուցված ծառայությունների դիմաց ենթակա չէ ավելացման ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին: Սա կապված է այն հանգամանքի հետ, որ նման վարձատրության վճարումը չի մտնում վաճառողի ծախսերի մեջ եւ չի կարող մտնել վաճառողի ծախսերի մեջ եւ, համապատասխանաբար, չի կարող վաճառողի կողմից ներառվել նշված գնի մեջ:

6. Գնման գծով միջնորդը (գործակալը), գործելով ի նպաստ գնորդի շահերի, նրան մատուցում է ապրանքների վաճառողներ փնտրելու ծառայություններ: Գնման գծով միջնորդի (գործակալի) կողմից կարող են մատուցվել նաեւ այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ ապրանքների մատակարարման համար պատվեր ձեւակերպելը եւ այն վաճառողին ներկայացնելը, ապրանքների նմուշներ ստանալը եւ դրանք գնորդին ներկայացնելը, գնորդի համար շահավետ պայմաններով եւ շահավետ գնով ապրանքների գնման վերաբերյալ բանակցությունների անցկացման հարցում գնորդին աջակցություն տրամադրելը, արտաքին տնտեսական պայմանագիրը

կնքելիս գնորդի շահերը ներկայացնելը եւ այլն:

7. Գնման գծով միջնորդի (գործակալի) դերը հաստատվում է, որպես կանոն, միջնորդության պայմանագրով եւ արտաքին տնտեսական պայմանագրով: Բացի դրանից՝ գնորդի եւ գնման գծով միջնորդի (գործակալի) միջեւ համապատասխան պայմանագրային հարաբերությունների առկայությունը կարող է հաստատվել այնպիսի փաստաթղթերով, ինչպիսիք են ապրանքների ընդունման հանձնման ակտերը, միջնորդության պայմանագրի կատարման նպատակով միջնորդի (գործակալի) եւ երրորդ անձանց միջեւ կնքված պայմանագրերը, թղթակցությունը (միջնորդի (գործակալի) նամակագրությունը եւ գնորդի կամ երրորդ անձանց հետ), ինչպես նաեւ գնորդի եւ գնման գծով միջնորդի (գործակալի) միջնորդային հարաբերությունների առկայության մասին վկայող մյուս փաստաթղթերը:

8. Գնորդի կողմից միջնորդի (գործակալի) գործողությունների հսկողությունը (գնման ենթակա ապրանքների, կոնկրետ վաճառողների թիվը, ապրանքների գինը, ապրանքների տեսականին եւ որակը, դրանց բեռնման եղանակը եւ ժամը որոշելը), մինչեւ վաճառողին ապրանքների համար վճարում կատարելու հետ կապված պարտավորությունների առաջացումը, նրան անհրաժեշտ դրամական միջոցների տրամադրումը վկայում են այն մասին, որ այդպիսի միջնորդի (գործակալի) կողմից մատուցվող ծառայությունները համապատասխանում են գնման գծով միջնորդների (գործակալների) կողմից սովորաբար մատուցվող ծառայություններին, այսինքն ՝ միջնորդը (գործակալը) գործում է՝ գնորդի շահերից ելնելով:

9. Որոշ դեպքերում գնման գծով միջնորդը (գործակալը) կարող է գնորդին հաշիվ ներկայացնել՝ նշելով ապրանքների համար վճարման ենթակա գինը եւ իր կողմից մատուցված միջնորդության ծառայությունների համար իր վարձատրության գումարները: Գնման գծով միջնորդի (գործակալի) կողմից այդպիսի հաշիվ ներկայացնելը հիմք չէ՝ նրան ապրանքների վաճառող համարելու համար: Տվյալ դեպքում, Մաքսային միության միասնական մաքսային

տարածք արտահանելու համար դրանց վաճառքի դեպքում ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը կարող է հաստատվել (հիմնավորվել) գնման գծով միջնորդից (գործակալից) գնորդի ստացած հաշիվներով, որոնք ներկայացվում են ապրանքները վաճառողների կողմից: Ապրանքները վաճառողների կողմից ներկայացվող՝ այդպիսի հաշիվները չներկայացնելը կարող է վկայել այն մասին, որ գնման գծով միջնորդ (գործակալ) անվանվող անձը փաստացի գնել է ապրանքները եւ վերավաճառել է դրանք գնորդին, այսինքն՝ նա է ապրանքները վաճառողը:

10. Այն դեպքում, երբ անձն իրականացնում է ապրանքների գնման գործարքի հսկողություն, որի արդյունքում նա հնարավորություն է ունենում ստանալու ոչ այնքան վարձատրություն՝ միջնորդության ծառայությունների դիմաց, որքան շահույթ՝ տվյալ ապրանքները տնօրինելուց կամ կարող է կրել կորուստներ, ապա այդ անձը նույնպես չի կարող դիտարկվել որպես գնման գծով միջնորդ (գործակալ), նույնիսկ եթե միջնորդության պայմանագրում կամ արտաքին տնտեսական պայմանագրում նա անվանվում է գնման գծով միջնորդ (գործակալ):

11. Վաճառքի գծով միջնորդը (գործակալը), գործելով ի շահ վաճառողի, նրան մատուցում է նրա կողմից վաճառվող ապրանքների գնորդներ փնտրելու ծառայություններ: Վաճառքի գծով միջնորդի (գործակալի) կողմից կարող են վաճառողին մատուցվել նաեւ այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ ապրանքների եւ դրանց մատակարարման պայմանների մասին գնորդներին նախնական տեղեկություններ հայտնելը, գնորդների հետ կապ հաստատելը եւ ապրանքների տեսականու, գների եւ մատակարարման պայմանների մասին նրանց ակտուալ տեղեկություններ ներկայացնելը, ապրանքների պատվերները գնորդներից վաճառողին փոխանցելը, արտաքին տնտեսական պայմանագրի պայմանները գնորդների հետ համաձայնեցնելը, արտաքին տնտեսական պայմանագիրը կնքելիս վաճառողի շահերը ներկայացնելը, վճարման ստացմանը եւ գնորդների կողմից ապրանքները ստանալուն հետեւելն ու ապրանքների

վաճառքի հետ կապված այլ ծառայություններ:

12. Վաճառքի գծով միջնորդի (գործակալի) վարձատրությունը, որպես կանոն, վաճառողի կողմից ներառվում է ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ, այդ պատճառով այն ներառվելու է ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի մեջ՝ այդ ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի կազմում:

Այն դեպքում, երբ վաճառքի գծով միջնորդի (գործակալի) վարձատրությունը վաճառողի կողմից ներառված չէ ապրանքների գնի մեջ եւ գնորդի կողմից վճարվում է կամ վաճառողին ապրանքների վճարման հաշվից առանձին՝ վաճառողի կողմից ներկայացված հաշվի հիման վրա, կամ անմիջականորեն վաճառքի գծով միջնորդին (գործակալին), ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս նշված վարձատրությունը պետք է ավելացվի փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին:

13. Արտաքին տնտեսական պայմանագրերում, միջնորդության պայմանագրերում եւ այլ փաստաթղթերում միջնորդներին նշելու համար կարող է օգտագործվել «բրոքեր» հասկացությունը, որը տեսականորեն որոշ իմաստով տարբերվում է «միջնորդ (գործակալ)» հասկացությունից: Այդուհանդերձ, նշված կատեգորիաների անձանց միջեւ գործնականում հստակ տարբերություն չկա:

Բրոքեր է համարվում այն միջնորդը, որը հիմնականում իրականացնում է գնորդի եւ վաճառողի միջեւ գործարքների կազմակերպման ծառայություններ եւ որի գործառույթների մեջ է մտնում բացառապես բանակցություններ անցկացնելու եւ արտաքին տնտեսական պայմանագիր կնքելու հարցում կողմերին աջակցություն տրամադրելը:

Այն դեպքում, երբ բրոքերի վարձատրությունը վճարվում է ապրանքները վաճառողի կողմից, այն վաճառողի կողմից սովորաբար ներառվում է ապրանքների վճարման հաշվի մեջ, այսինքն՝ փաստացի վճարված կամ

վճարման ենթակա գնի մեջ եւ այդ պատճառով ենթակա չէ ավելացվելու այդ գնին: Այն դեպքում, երբ բրոքերի վարձատրությունը վաճառողի կողմից ներառված չէ ապրանքների վճարման հաշվի մեջ, սակայն միեւնույն ժամանակ գնորդի կողմից վճարվում է վաճառողի ներկայացրած առանձին հաշվով, այն պետք է ավելացվի փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին:

Այն դեպքում, երբ բրոքերի վարձատրությունն ամբողջովին վճարվում է գնորդի կողմից՝ բրոքերի ներկայացրած հաշվով, կամ այդպիսի վարձատրության մի մասը վճարվում է վաճառողի կողմից, իսկ մյուս մասը՝ գնորդի կողմից, նշված վարձատրությունն ավելացվում է փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին միայն այն չափով, որ չափով այն վաճառողի կողմից ներառված չէ փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ, վճարվել է գնորդի կողմից եւ գնման համար վարձատրություն չէ:

14. Միջնորդների (գործակալների) վարձատրության եւ բրոքերների վարձատրության մեջ, Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 1 «ա» ենթակետի իմաստով, չեն մտնում նրանց կողմից այնպիսի ծառայությունների մատուցման դիմաց միջնորդների (գործակալների) վարձատրությունը եւ բրոքերների վարձատրությունը, ինչպիսիք են՝ ապրանքների փաթեթավորումը, ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը)՝ մինչեւ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում ապրանքների ժամանման վայրեր եւ այլն: Օրինակ՝ գնման գծով միջնորդի (գործակալի) կողմից ապրանքների փոխադրում (տրանսպորտային փոխադրում) իրականացնելիս՝ նշված ծառայությունների համար վճարման ծախսերը մտնում են Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում նշված ծախսերի մեջ:

15. Եթե ապրանքների մաքսային արժեքի մեջ ներառման ենթակա՝ միջնորդի (գործակալի) վարձատրության եւ բրոքերի վարձատրության գումարը վերաբերում է այն մի քանի անուն ապրանքներին, որոնք հայտարարագրվում են ապրանքների մասին մեկ հայտարարագրում կամ տարբեր հայտարարագրերում, ապա ապրանքների մաքսային արժեքի որոշման նպատակով՝ նշված գումարը

բաշխվում է այդպիսի ապրանքների յուրաքանչյուր անվանման միջեւ՝ դրանց փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի համամասնությամբ՝ հիմք ընդունելով Մաքսային միության միասնական մաքսային տարածք արտահանման համար վաճառվող բոլոր ապրանքների ընդհանուր գինը՝ արտաքին տնտեսական պայմանագրին համապատասխան: